

բազործէ։ Անոր պատասխանուեցաւ՝ թէ այս մասին Արքեպիսկոպոսը չի սխալիր, վասնզի անով, հաստատ հաւատքով կը քարոզէ եւ կը պահէ Տիեզերական Եկեղեցւոյ հնամենի սովորութիւնը, որ առաքեալներէն կու գայ եւ միահամուռ ընդունուած է արեւելեան եւ արեւմտեան Եկեղեցւոյն կողմէ, եւ վճռուած է բազմաթիւ տիեզերական ժողովներէ եւ հայոց աւանդուած է Փլորենտիոյ ժողովին ատեն խնդրուած վճռագրի մը մէջ, ինչպէս աւելի երկարօրէն պիտի տեսնես նամակին մէջ, զոր Նորին Սրբութիւնը քեզի կը յղէ։ Այս պատճառաւ Տէրութիւնդ թող հետեւի միւս հաւատացեալներուն եւ այս Ս. Աթոռին հաւատքին եւ վարդապետութեան, եւ իր միտքը դարձնէ միութեան եւ անկեղծ համաձայնութեան, որպէսզի առանց հոգիներու վնասին, այլ զերազոյն ուրախութեամբը քրիստոնեայ աշխարհին, դարձեալ Հայ Աղօն ընդունուի Տիրոջ ժառանգութեան մէջ, եւ Սրբազան ժողովը եւ Վսեմաշուք Հայրերը՝ Քեզ եւ Եպիսկոպոսներդ ա'յնքան սիրով պարուրեն ո'րքան միւս ուղղափառները իրենց բարեգործութեամբը կը պահպանեն եւ կը հոգան։

Եթէ այս բանս չընծայուեցաւ Տէր Եպիսկոպոսին, զայն վերագրելու էք ոչ թէ դիտաւորութեանը, այլ օրէնագրութեանը Սրբազան ժողովին։ Սակայն Նորին Սրբութիւնը իր յատուկ բարեացակամութեամբը սիրով օգնեց Եպիսկոպոսին, եւ հոգաց Քեզի ոսկեհիւս շուրջաւ մը զրկել իր միջոցաւ. ինչ